ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

2026 թվականի թիվ 232 -Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻՆ ՊԱՐԳԵՎԱՏՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» օրենքի 6-րդ հոդվածի 6-րդ մասով, «Հանրային ծառայության մասին» օրենքի 9-րդ հոդվածի 19-րդ մասով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2022թ. դեկտեմբերի 29-ի թիվ 1550-Լ որոշմամբ հաստատված թիվ 9 հավելվածի 19-րդ կետի 24-րդ ենթակետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզպետի 2026 թվականի հուլիսի 30-ի թիվ 192-Ա որոշումը՝

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ ԵՄ.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2025 թվականի նոյեմբերի 27-ի թիվ 1712-Լ որոշման թիվ 1 հավելվածով հաստատված պիլոտային կարգով հաշվարկած խրախուսման ֆոնդից դրամական պարգևատրմամբ խրախուսել ՀՀ Վայոց ձորի մարզպետի աշխատակազմի վերոնշյալ որոշումների իմաստով ղեկավար պաշտոն զբաղեցնող աշխատակիցներին՝ համաձայն թիվ 1 հավելվածի:

2. Խրախուսման ֆոնդից դրամական պարգևատրմամբ խրախուսել վերոնշյալ որոշումների իմաստով ղեկավար պաշտոն չզբաղեցնող ՀՀ Վայոց ձորի մարզպետի աշխատակազմի աշխատակիցներին՝ համաձայն թիվ 2 հավելվածի:

3. Սահմանել, որ ՀՀ Վայոց ձորի մարզպետի 2026 թվականի հուլիսի 30-ի թիվ 192-Ա որոշման հիմքով խրախուսանքի արժանացած անձին տրված պարգևավճարի 10 տոկոսը, իսկ վերջինիս մեծությունը 250 հազար դրամը գերազանցելու դեպքում՝ 250 հազար դրամը, նախատեսված է վճարման կիսամյակին հաջորդող կիսամյակի ընթացքում կրթության կամ գիտական գործունեության հետ կապված, այդ թվում՝ միջազգային հեղինակավոր գիտական պարբերականներում հրապարակումների (այսուհետ՝ կրթության) նպատակով ծախսերի համար: Կրթության նպատակով ստացված միջոցների գծով ծախսերը հաստատող փաստաթղթեր չներկայացնելու դեպքում այդ մասը ենթակա է նվազեցման հաջորդող ժամանակահատվածի խրախուսման ֆոնդից:

4. Որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

03.09.2026

X

Подписано: ARSENYAN VAHAGN 2708930639

Վ. ԱՐՍԵՆՅԱՆ

2026 թվականի սեպտեմբերի 3

ք. Եղեգնաձոր